ու վստահելի յեղափոխականն էր երեւում մեզ, Կիլիկիայի սահմանն անցնելուն պէս, թողնում է Տամադեանին ու իր տունը գնում: Միւս չորս մշեցիներից երկուսը հասել էին իրանց տունը, մի ամիս մնացել ու կրկին Կալամաքի վերադարձել: Տամադեանին հաւատարիմ էին մնացել միայն երկու հոգի՝ Յովհաննէսը (Թոլոզը) եւ Կարապետը, որոնք թիւրքական բանտի տանջանքների բոլոր բովերից անցան:

Զմոռանամ ասել եւ այն, որ մեր նիւթական միջոցներն, այն ժամանակ այնքան սուղ էին, որ Տամադեանին իր խմբով, տրուած ճանապարհածախսը նրանց հազիւ հազ Մերսին էր հասցրել: Մերսինում խումբը ստիպուած էր եղել մի առժամանակ բեռնակրութեամբ պարապել, մինչեւ որ կարողացել էին իրենց ճանապարհը ռnfnվ շարունակելու չափ փող յետ ձգել:

Տամադեանին ճանապարհ ձգելուց յետոյ, Աթէնքում իբրեւ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ մնացի միայն ես: Կալֆայեանը, բժ. Յակոբեանն ու իր ընկերը Տամադեանից առաջ էին թողել Աթէնքը: Ուշտունին դեռ յամառում էր մեր կուսակցութեանը յարելու եւ տեղափոխուել առանձին էր ապրում, միանգամայն կիսաքաղց վիճակով:

Մնալով միայնակ, ես աւելի եւս մօտիկացայ Վուլգարիսին: Շուտով նա ինձ մի աղատ սենեակ տուեց իր փոքրիկ տան մէջ (ի հարկէ վարձով), եւ ես նրա մօտ տեղափոխուեցի ապրելու:

ՌՈՒՍԱԿԱՆ ՕՐԻԵՆՏԱՑԻԱՆ

Գրեց՝ ԿԱՐՕ ՍԱՄՈՒՆԻ

V

ՀԻՄԱ մօտենանք բոլշեւիկեան Ռուսաստանին եւ քննենք այն հետեւանքները, որ կարող են ստացուել անոր Թուրքիոյ հանդէպ ունեցած բարեկամական քայլերէն:

Շատերն այն կարծիքէն են, թէ ռուս-թրքական ներկայ բարեկամութիւնն անկեղծ չէ, եւ ռուսը կը մնայ Թուրքիոյ դարաւոր թշնամին: Ի հարկէ, այս ճիշդ չէ: Թուրքիան դաղրած է այլեւս վտանդաւոր կայսրութիւն մ՝ըլլալէ եւ չի ներկայացներ այն քաղաքական եւ զինուորական ուժը, որ ունէր առաջ: Թուրքիան իր ամբողջութեամբ պէտք է այժմու Ռուսաստանին: Քաղաքական, տնտեսական եւ զինուորական տեսակէտներէն Թուրքիոյ ամբողջական օգտագործումը անհրաժեշտութիւն մըն է, որ կարող է դոհացում դտնել կամ ամբողջական միացումով, կամ զինուորական դաշնակցութեամբ եւ կամ առնուազն՝ բարեկամութեամբ: Մինչդեռ Թուրքիան միւս բոլոր պետութիւններու աչքին տակաւին բաժանելի պետութիւն մըն է: Ռուս-թրքական բարեկամութիւնը կարող է մեծապէս նպաստել Ռուսաստանի քաղաքական այն մեծ ձեռնարկներուն, որ ան միտք ունի կատարելու ընդդէմ Անդլիոյ, Եւրոպայի, Ասիոյ կամ փոքր չափով, Բալկաններու եւ Միջերկրականի աւազանի մէջ: Եւ փոխադարձաբար, Թուրքիան, այսօր, մեծապէս կարող է օգտուել միայն Ռուսաստանի ուժէն իրեն զօրաւոր դիրք մ՝ապահովելու այն ձգտումներու դէմ, որ կը սլաքուին Յունաստանի, Իտալիոյ եւ Անդլիոյ կողմէն:

Ընկ. Լ. Շանթ իր «Մեր Անկախութիւնը» («Հայրենիք» Մատենաշար թիւ 1.) դրքին մէջ խիստ յստակ դատողութեամբ եւ մանրամասնօրէն դրաղուած է այս քաղաքական հարցերով: Շանթի դարդացուցած տեսութիւններուն կողմնակից եմ եւ ներմապէս կը յանձնարարեմ այդ հատորի ընթերցումը: Միայն երկու կէտի վերաբերմամբ տարբեր ըմբռնում ունեմ. ա) իմ կարծիքով պանթուրքիզմը համաշխարհային մեծ ուժերու շրջանակով քննուած է, եւ որոշ կերպով չէ մատնանշուած այն վտանգը, որ ան կը ներկայացնէ հայոց համար, թէեւ օր մը, մեծ ուժերու հարկադրանքին տակ, կարող է իր նպատակին չհասնել. եւ բ) շարք մը հաւանականութիւններ քննած ժամա-